

Արձանագրություն հ.2

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
23.03.16 թ. կայացած նիստի:

Նիստն ներկա էին գիտխորհրդի 36 անդամներից 29 -ը:

Օրակարգում՝

1. Ամբիոնի վարիչի և դոցենտի պաշտոնների տեղակալման մրցույթ:
2. Ուսումնական պլանում առաջարկված փոփոխությունների հաստատում:
3. Ֆակուլտետի 2016- 2020 թ.թ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Հ.Մնացականյանը: Նա ներկայացրեց մրցույթի մասնակիցների անձնական գործերի տվյալները և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նիստի որոշումն այն մասին, որ մրցույթի բոլոր մասնակիցները երաշխավորվում են մասնակցելու ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Մրցույթին մասնակցում են կառավարման և գործարարության ամբիոնի վարիչի և և տարբեր ամբիոններից 7 դոցենտի պաշտոնի տեղակալման համար դիմածները:

Արտահայտվեցին:

Գ.Ղարիբջանը, նա ասաց, որ պետք է փաստել պ. Ղանթարջյանի արդյունավետ աշխատանքը: Ինչ վերաբերում է Կ.Խաչատրյանին, ապա նրան ճանաչում է ուսանողական տարիներից: Ակնհայտ են նրա գիտական արժանիքները մարդկային լավագույն որակները: Գիտխորհուրդը լիովին և վստահությամբ կարող է երաշխավորել նրան դառնալու ամբիոնի վարիչ:

Հ.Մարգարյանը նույնպես, արգասաբեր որակեց պ-ն Ղանթարջյանի աշխատանքը ամբիոնի վարիչի պաշտոնավարման 13 տարիների ընթացքում: Նա ասաց, որ ամբիոնի վարիչի նոր թեկնածուի մասին որոշում ընդունելը հեշտությամբ չի տրվել: Մինչ այդ մենք որոշակի պահանջներ էինք ներկայացնում, որ միայն դոկտոր, պրոֆեսորները կարող են զբաղեցնել ամբիոնի վարիչի պաշտոնը: Մրցութի արդյունքներով մեկ դիմում է առկա: Կ. Խաչատրյանի երեք տասնամյակը շուտով բոլորելու է, նա հասցրել է դառնալ գիտության թեկնածու, դոցենտ, ընտանիք է կազմել, ունի մեկ տղա: Նա գիտական գործունեությունը զուգակցում է կազմակերպչական աշխատանքների հետ, պարբերաբար նրա ղեկավարությամբ կազմակերպվում են երիտասարդ գիտնականների գիտաժողովներ: Ունի թիմային աշխատանքի լուրջ ձեռքբերումներ: Ես հուսով եմ, որ նա ըստ արժանվույն կկատարի իր պարտականությունները ամբիոնի վարիչի պաշտոնում:

Խոսելով դոցենտի պաշտոնը զբաղեցնել հավակնորդների մասին, նա ասաց, որ բոլորն էլ համապատասխանում են ներկայացվող պահանջներին:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ռ.Ալավերդյան (նախագահ), Ա.Առաքելյան, Ա.Կարապետյան:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ռ.Ալավերդյանի հաշվետվությունը փակ, գաղտնի քվեարկության արդյունքների մասին:

Քվեարկության արդյունքները հետևյալն են.

Տնտեսագիտության տեսության ամբիոն՝

1. Ներսիսյան Արմեն Ռովելի 28 կողմ 1 դեմ 1 անվավեր

Կառավարման և գործարարության ամբիոն՝

1. Անտոնյան Քրիստինե Աղասու 27 կողմ 1 դեմ 1 անվավեր
2. Ասրյան Կարինե Նիկոլայի 28 կողմ 0 դեմ 1 անվավեր
3. Խաչատրյան Նոնա Նիկոլայի 27 կողմ 1 դեմ 1 անվավեր

Ֆինանսահաշվային ամբիոն

1. Ասատրյան Բագրատ Արտաշեսի 28 կողմ 0 դեմ 1 անվավեր

Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն՝

1. Գաբրիելյան Արման Գառնիկի 28 կողմ 0 դեմ 1 անվավեր
2. Պողոսյան Սուրեն Հավհաննեսի 27 կողմ 1 դեմ 1 անվավեր

Որոշեցին՝ հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և՝

Տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտի պաշտոնում ընտրված համարել՝

Ներսիսյան Արմեն Ռովելի

Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտի պաշտոնում ընտրված համարել՝

Անտոնյան Քրիստինե Աղասու
Ասրյան Կարինե Նիկոլայի
Խաչատրյան Նոնա Նիկոլայի

Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտի պաշտոնում ընտրված համարել՝

Ասատրյան Բագրատ Արտաշեսի

Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտի պաշտոնում ընտրված համարել՝

Գաբրիելյան Արման Գառնիկի
Պողոսյան Սուրեն Հովհաննեսի

Օրակարգի 2-րդ հարցը ուսումնական պլաններում կատարված փոփոխությունների հաստատումն էր: Կատարված փոփոխությունները ներկայացրեց դեկան, պրոֆ. Հ.Սարգսյանը: Որոշեցին հաստատել ուսումնական պլաններում կատարված փոփոխությունները և ներկայացնել ռեկտորատ ի նկատի ունենալով հետևյալները:

1. Բակալավրիատի «Տնտեսագիտություն», «Կառավարում» և «Ֆինանսներ» մասնագիտությունների ուսումնական պլաններում կատարել փոփոխություն, համաձայն որի 2019-2020թթ. ուստարվանից սկսած (հեռակա ուսուցման դեպքում՝ 2020-2021թթ. ուստարվանից սկսած) բակալավրիատում ավարտական աշխատանք կատարելու թույլտվություն կտրվի ավարտական կուրսի միայն այն ուսանողներին, որոնց առաջին 6 կիսամյակների (հեռակա ուսուցման դեպքում՝ առաջին 8 կիսամյակների) ընդհանուր միջին որակական գնահատականը (ՄՈԳ) 11 միավոր և ավելի է: 11 միավորից պակաս ՄՈԳ ունեցող ուսանողները հանձնում են երկու ամփոփիչ քննություն:
2. Նշված մասնագիտությունների ուսումնական պլաններում փոփոխել ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության կրեդիտատարությունների հարաբերակցությունը՝ դրանցից յուրաքանչյուրի համար սահմանելով 8-ական կրեդիտ նախկին համապատասխանաբար 4 և 12 կրեդիտների փոխարեն:
3. Հաստատել առկա ուսուցման բակալավրիատի 2016-2020թթ., մագիստրատուրայի 2016-2018թթ. և հեռակա ուսուցման բակալավրիատի 2016-2021թթ., մագիստրատուրայի 2016-2019թթ. ուսումնական պլանների նախագծերը (ուղարկվում են ուսումնական վարչություն):

4. Հաստատել «ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը (իրականացման ժամանակացույց-պլան)»:

Օրակարգի 3-դ հարցի վերաբերյալ նույնպես զեկուցեց դեկան, պրոֆ. Հ.Սարգսյանը:

Որոշեցին հաստատել տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2016-2020 թ.թ. զարգացման ռազմավարական ծրագիրը:

Ընթացիկ հարցերի շրջանակում դիտարկեցին տնտեսագիտության տեսության ամբիոնում Աննա Մնացականի Հարությունյանին հայցորդ ձևակերպելու մասին հարցը: Որոշեցին Աննա Մնացականի Հարությունյանին ձևակերպել հայցորդ <Տեսական և ընդհանուր տնտեսագիտության> ամբիոնում:

Ֆակուլտետի գիտխորհրդի
նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր

Ֆակուլտետի գիտխորհրդի
քարտուղար, տ.գ.թ., դոցենտ



Հ.Լ.Սարգսյան

Ա.Հ.Համբարձումյան